Թ. ՏԱՐԻ ... 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ ... ԹԻՒ 863

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արտասահմանի համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 «
Ամերիկայի համար տարեկան 3 տ.
վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին էջին համար 40 սանթիմ իսկ վերջին էջերին համար 20 սանթիմ է. Երկարատեւ ծանուցումներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ուղղել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՏՕՔԹ. Ն. ՍՕԹԻՐՕՖ

Վիրաբոյժ-Մանկաբարձ

Վառնա Մարիա-Լուիզա, փողոց. Թիւ 8 (Զինուորական ակումբի մօտ(
Հիւանդ կընդունի ժամը 2—4 կէսօրէ վերջ

3-5

### «ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բրոշիւրը յանձնված է տպագրութեան.

Բրոշիւրի նպատակն է, առանց խծբծանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Բնական է որ բրոշիւրի մէջ փաստացի դոկումանները մեծ տեղ պիտի գրաւեն.

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդագրվողի համար 2.50 ֆր.

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան

ՀԱՅ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ,

Ս. Դանըբեան եւ Ընկ.

Սօլանոքա փողոց (Պալըգ բազար( Թիւ 524 Ս. ուշաթքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն դեղավաճառատան մէջ կը գտնուին մաքուր եւ առաջնակարգ դեղերու մեծաքանակ մթերքէ զատ թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամէն տեսակ էսքէսիալիսթէներ. բժշկական անօթներ, քաուչուքի ապրանաց վերաբերեալ բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, ափպերոններ, ջերմաչափներ եւն եւն.

Ասոնցմէ զատ կը գտնուի նաեւ սանտարկչութեան, ոսկերչութեան եւ առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բաղադրութիւններ.

Թարմ եւ անարատ

Նորվէկիայի ձկան իւղ

Ցարդ դեղերու սղութենէն գժգոհութիւն յայտնողները կը բաւէ որ անգամ մը գնում ընելէ առաջ անգամ մը դիմեն նոր դեղավաճառատունս, ուր ապահովաբար պիտի գտնեն գներու աժանութեան հետ դեղերու ընտրելագոյնը.

Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ դեղերու կրկնավաճառումով զբաղող խանութպաններու համար մասնաւոր զեղչ:

Յանձնարարութիւնք փութով եւ ճշդութեամբ կը գործադրուին.

## ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՐ ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

Ռուսական կեանքի յեղաշրջումը և Հ. Յ. Դաշնակցութեան վերակազմակերպումը Կովկասում, ոչ ընկերվարական և Տաճկահայ խնդրով ուզածի չափ չզբաղվող հայերին ստիպեց մի առանձին համախմբում ստեղծել ու այդ համախմբումը այսօր ունի իր բիւրօն արդէն, կոչվում է Կովկասահայ դեմօկրատ կուսակցութիւն. Այսուհետեւ Կովկասահայի հասարակական գործերի ղեկը անցնելու է ազգային դեմօկրատների և հայ ռադիկալ դեմօկրատների ձեռքը և Դաշնակցութիւնը ուզած չուզած պէտք է չէզոքանայ, մանաւանդ հիմա, երբ ոչ միայն փետրազրկված է իր նախորդ հմայքից, այլ և բոլոր յառաջադիմական տարրերը նրա գոյութիւնը Կովկասում ոչ միայն աւելորդ այլեւ վնասակար են համարում.

Այսպիսի պարագաներում պարզ է որ Դաշնակցութեան կովկասեան ներկայ շէֆերը պէտք է չէզոքանան մեծամասնութեամբ կամ ձուլվեն միւս երկու հայ կուսակցութիւնների մէջ. Մանաւանդ որ այդ շէֆային մեծամասնութիւնը առաջուց էլ շատ քիչ էր հետաքրքրվում Տաճկահայ դատով. «Երկիր» թերթի «Հայվայի» անունի գլխին հաւաքված պարոններից հազիւ մի քանի հոգի միայն տաճկահայ դատով զբաղվող, այն էլ իրենց հնօրեայ ունակութեամբ հասարակութեան և յեղափոխական գրական գործերով միայն զբաղվելու համար. Մեն հիմնարկութիւն, հաստատութիւն, կուսակցութիւն մի քանի հոգի հնագիտական նմոյշը ունենալու է անպատճառ. Եւ Կովկասում գտնվող շէֆերից մի քանի հոգի անպատճառ կաշխատեն այդ հնագիտական վարդը կազմել տաճկահայ յեղափոխութեան փորձերի կոլէկսիոնի մէջ, մինչեւ որ ժամանակը նրանց դուրս չպրտէ.

* *

Նոր տեսակ համախմբվելու նշաններ են երեւում և տաճկահայ յեղափոխականների մէջ. Տաճկահայ յեղափոխական գործիչները զանազան բանակներից ջերմ ցանկութիւն են յայտնում այսուհետեւ համերաշխ գործել. Այդ փափագը ունեն Դաշնակցականները, հին Հնչակեանները և Վերակազմեալ Հնչակեանները. Տեսա՜յ! Վարժեանը, «Հայրենիք»ի խմբագիրը որ վերջին ընդհանուր ժողովում համերաշխութեան անունը լսել իսկ չէր ուզում, այսօր ջերմ համերաշխական է դարձել. շնորհաւորում ենք այդ տաճկահայ գործիչին, այդ շուտափոյթ, թէեւ իր երկրի համար շատ օգտակար փոփոխութեան համար... Մենք դեռ տարիներ առաջ տաճկահայ դատին նուիրված կուսակցութիւնների համերաշխութեան պաշտպան ենք եղել թէ Դաշնակցութեան ընդհանուր ժողովներում և թէ տեղ հասարակական քայլերում.

Շահրիմանը գրում էր «Շարժում»ի մէջ. (վերակազմեալ) Հրատ Կամսարի հետ (հին հնչ.) հանգանակութիւն և ժողով ենք ունեցել. Այնպէս որ այսօր մենք միայն կարող ենք ուրախանալ որ կուսակցութիւնները համերաշխ գործելու խնդիրը բոլորովին հասունացած են համարում և կարող են աւելի լոյն, հաստատուն հիմերի վրա դնել. դրան թերեւս կարճ ժամանակից հետեւի և տաճկահայ յեղափոխական կուսակցութիւնների միութիւնը. Եւ ինչո՞ւ չը միանան, քանի որ տարբերութիւն չունեն իրարից ոչ նպատակով և ոչ էլ գործելակերպով. Տաճկահայ դատին նուիրված մեր կուսակցութիւններից ոչ մէկը մեծաքանակ և երկրում գործելու ընդունակ գիտակից տաճկահայ ուժեր չունի. Նրանք միանալով իսկ դեռ հնարաւորութիւնը չունեն անհրաժեշտ գործիչների թիւը լրացնել երկրում. Այդ թերութիւնը և բաժան բաժան երկրից դուրս եղած ծախքերի մեծութիւնը արդէն բաւ է դրանց բոլորին միացնելու համար, մանաւանդ երբ, ինչպէս վերը ասինք, ոչ նպատակի և ոչ գործելակերպի տարբերութիւն կայ եղած կուսակցութիւնների միջեւ.

Բայց, կուզէք շատ խօսիր բայց, եթէ տաճկահայ դատին նուիրված կուսակցութիւնները նորից արտասահմանը պէտք է դարձնեն իրենց գործունէութեան ասպարէզը, իրական յեղափոխական ոգին չը պէտք է գոյութիւն ունենայ, համերաշխ էլ լինեն, միանան, ինչ կուզէ անեն, կրկին ոչ մի օգուտ չը պէտք է կարողանան բերել տաճկահայ ժողովրդին.

Նրանք կունենան կենդրոններ և բիւրոներ արտասահմանում, թերթեր հայերէն և օտար լեզուներով աշխարհիս չորս ծայրերում, ընթերցարաններ, դասախօսութիւններ, ճառեր, դաշտահանդէսներ բոլոր մայր քաղաքների վրա, սակայն չեն կարող կազմակերպել ոչ մի ուժ երկրում. թերեւս կարենան միայն մի մի ռումբ նետել Պոլսում, տասնեակ հրացաններ պայթեցնել զանազան գաւառներում, և կոտորել տալ այն ժողովրդին ու գաղթով հալածանքներով դատարկել տալ այն երկիրը, որոնց փրկութեան համար են գոյութիւն առել.

